# «ՎԵՐԵՎԻ ԾՈՎԻ» ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՎՈՒՔՋՅԱՆ

Սումերա-ակկադական և ասորեստանյան արքաների սեպագիր արձանագրություններում «Վերևի ծով» տերմինը հաճախ է հանդիպում։ Մերթ ասվում է, թե տվյալ արքային հաջողվել է երկրներ նվաճել մինչև «Վերևի ծովը» կամ աստվածները նրան են հանձնել «Ներքևի ծովից» մինչև «Վերևի ծով» տարածվող երկրները։

Հայտնի բոլոր արևելագետներն էլ համակարծիք են, որ «Ներքևի ծովը» Պարսից ծոցն է։ Ինչ վերաբերում է «Վերևի ծովիչ տեղադրությանը, ապա հետազոտողներն այս հարցում տարակարծիք են։ Արևելագետներից ոմանք գտնում են, որ «Վերևի ծովը» Վանա լիճն է[1], կա նաև կարծիք, որ այն Միջերկրական ծովն է[2]։ Որոշ գիտնականներ էլ կարծում են, թե «Վերևի ծովը» Սև ծովն է[3], չնայած սեպագիր աղբյուրներում այդ կարծիքը հաստատող որևէ ուղղակի կամ անուղղակի վկայություն չկա։

Սումերական քաղաքները հակամարտ փոքր քաղաք-պետություններ էին, որոնք միմյանց դեմ տևական կռիվներ էին մղում։ Այս պայմաններում դժվար թե գրանցից որևէ մեկի արքան կարողանար հասնել Սև ծով։ Միջագետքյան տափաստանները հյուսիսից փակող դժվարանց լեռներն ու ռազմատենչ ցեղերի դիմադրությունը հաղթահարելով Վանա լիճ հասնելը սումերական անգամ մեծագույն արքայից կապահանջեր այդ ժամանակների համար վիթխարի ուժ և մեծ խիզախություն։

Մ. թ. ա. III հազարամյակում ապրած Լուգալ-Զագիսին՝ սումերական Էրեք քաղաքի արքան, կարո՞ղ էր հասած լինել Սև ծով՝ անգամ երբ իր իշխանությանն էր ենթարկել մի քանի քաղաքներ։ Ահա թե ինչ է գրում նա. «...Երբ Էնլիլ աստվածը, երկրների (Սումերի) արքան, Լուգալ-Զագիսիին էր հանձնել երկրների թագավորությունը և շնորհել նրան հաջողություն երկրի աչքի առաջ, և երբ նրա հզորությունը երկրներին խոնարհեցրել էր, և նա նրանց հաղթել էր արևի ծագից մինչև նրա մայրամուտը, այդ ժամանակ նա ուղիղ ճամփա բացեց Ներքևի ծովից Եփրատի ու Տիգրիսի վրայով մինչև Վերևի ծով...»[4]։

---

[1] Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագիր շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 431, Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 349, Н. В. Арутюнян, Биайнили, Ереван, 1970, стр. 110.

[2] L. W. King, A History of Sumer and Akkad, London, 1916, p. 195.

[3] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 59, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. I, Երևան, 1974, էջ 568։ Լավ կլիներ որ քիչ պաշտպանված վարկածները հանրագիտարանում չերևան առանձին՝ որպես տվյալ հարցի շուրջ գոյություն ունեցող միակ տեսակետ. իհարկե, նպատակահարմար է նշել այդպիսի վարկածները, բայց պայմանով, որ դրանք տեղ գտնեն տվյալ հարցի շուրջ ավելի պաշտպանված տեսակետի կամ տեսակետների կողքին, որովհետև հանրագիտարանը պիտի լինի համապարփակ։

[4] L. W. King, նշվ. աշխ., էջ 195։

Լ. Քինդը քննելով այս արձանագրության բովանդակությունը, գրում է. «...Պարզ է, որ Ներքևի ծովը Պարսից ծոցն է, իսկ «Վերևի ծովով» հավանական է, որ նշված լինի Միջերկրականը, քան թե Ուրմիա լիճը կամ Վանա լիճը...»[5]։ Ինչպես տեսնում ենք, նա Լուդալ-Զագիսիի համար Միջերկրական ծով հասնելը ավելի հեշտ է համարել, քան թե Վանա լիճը և կասկած է հայտնել սումերական այս արքայի այդքան հեռու (մինչև Վանա լիճ) գնացող նվաճումների հնարավորության մասին՝ երևի նկատի ունենալով այն մեծ դժվարությունները, որոնց նա կհանդիպեր թշնամի ռազմատենչ լեռնական ցեղերի միջով և դժվարանց լեռների վրայով Վանա լիճ հասնելու ճանապարհին։

Այս ենթադրությունը ճիշտ չէ թեկուզ այն պատճառով, որ Եփրատ ու Տիգրիս գետերով կարելի է հասնել ոչ թե Միջերկրական ծով, այլ՝ Վանա լիճ։ Մյուս կողմից՝ սումերա-ակկադական և ասորեստանյան արքաները Միջերկրականը կոչել են «Մեծ ծով» և ոչ թե «Վերևի ծով»։ Ահա այս մասին Ասորեստանի արքա Շամսի-Ադադի մի հիշատակությունը. «...Իմ մեծ անունս և իմ հուշակոթողս ես կանգնեցրի Laban երկրում Մեծ ծովի ափին»[6]։

Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ «Վերևի ծով» արտահայտությամբ կարող էր նշված լինել միայն Վանա լիճը։

Այս եզրակացությանը հանգեցինք լոկ տրամաբանական հետևությամբ, բայց, բարեբախտաբար, ունենք սեպագիր կոնկրետ վկայություն-տվյալներ, որոնք հավաստում են, որ «Վերևի ծով» արտահայտությամբ նշվել է Վանա լիճը։

Եփրատ ու Տիգրիս գետերը միջագետքյան ժողովուրդների կյանքում տնտեսական մեծ դեր են խաղացել և միաժամանակ եղել են պաշտամունքի առարկա։ Այսպես, օրինակ, սումերներն իրենց ջրի էա աստծուն (որի տաճարը գտնվում էր Էրիդու քաղաքում) պատկերացնում էին ձեռքում բռնած մի սկիհ, որից հոսում ու գետին էին թափվում ջրի երկու շիթեր, որոնք խորհրդանշում էին Միջագետքի սրբազան զույգ գետերը։ Միջագետքյան ժողովուրդները այս գետերի մասին հորինել էին բազմաթիվ առասպելներ։ Այս գետերի հեռավոր ակնաղբյուրները և դրանց բխեցնող հյուսիսային լեռնաշխարհը նրանց համար ունեին առեղծվածային խորհրդավորություն՝ որպես առասպելական գանձերի երկիր, որպես աստվածների բնակավայր հանդիսացող լեռների աշխարհ։ Միաժամանակ, այդ լեռները հարուստ էին անտառանյութով, որից զուրկ էին Միջագետքի ընդարձակ տափաստանները։ Այդ անտառանյութը կարելի էր հեշտությամբ տեղափոխել այս մեծ գետերով՝ հոսանքն ի վար։

Հետևաբար, կասկած չկա, որ այս արքաները պիտի ձգտեին թափանցելու Եփրատի ու Տիգրիսի հոսանքն ի վեր՝ դեպի «Վերևի երկրները», դեպի այդ գետերի ակնաղբյուրները, ուր և գտնվում էր «Վերևի ծովը»։ Ահա թե ինչ է գրում Սալմանասար III-ը (858—824 թթ. մ. թ. ա.). «...իմ գահակալության 15-րդ տարում ես առաջացա դեպի Տիգրիսի ու Եփրատի ակնաղբյուրները, ես դրոշմեցի (քանդակեցի) իմ արքայական պատկերը նրանց ժայռերի վրա»[7]։

---

[5] Նույն տեղում (այս և հետագա ընդգծումները մերն են—Մ. Գ.)։

[6] D. Lukenbill, Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, 1927, p. 17.

[7] Նույն տեղում, էջ 205։

Ասորեստանի աշխարհակալ արքաները հաճախ Նաիրյան երկրներին անվանում են «Վերևի երկիր», հաճախ էլ գրում են. «գնացի դեպի վերև՝ դեպի Նաիրի»: Ահա մի հիշատակություն Շամսի-Ադադ V-ից (823—810 թթ. մ. թ. ա.). «Իմ առաջին արշավանքի ժամանակ գնացի վերև՝ Նաիրիի դեմ, տուրք (բաղկացած) լծի վարժեցրած ձիերից ես ստացա բոլոր արքաներից Նաիրիի...»[8]։ Հետևաբար պարզ է, որ «Վերևի ծովն» էլ պիտի գտնվեր «Վերևի երկիր» կոչված Նաիրի երկրներում։

Այս իրողությունը պարզ երևում է Թուկուլտի-Ուրտա I-ի մի արձանագրությունից. «Թուկուլտի-Ուրտա՝ արքա տիեզերքի, արքա Ասորեստանի, արքան (աշխարհի) չորս շրջանների, արևը բոլոր ժողովուրդների, արքան հզոր, արքա Քարդունիաշի (Բաբելոնի), արքա Սումերի և Ակկադի, արքա Վերևի (ու) Ներքևի ծովերի, արքա լեռների ու լայն դաշտերի (անապատի), արքա Շուբարիի (ու) Կուտիի և արքա բոլոր Նաիրի երկրների, արքա, որին աստվածները հասցրել են իր սրտի ցանկություններին (գր. Հաղթանակի)...»[9]։

Այս արքան իրեն կոչում է «արքա Վերևի ու Ներքևի ծովերի». մի՞թե կարելի է «Վերևի ծովի» տակ Սև ծով հասկանալով ընդունել, որ Թուկուլտի-Ուրտա I-ը իրեն կոչում է Սև ծովի եզերքների երկրների արքա։ Իհարկե ոչ։ Նա որոշակիորեն թվարկում է այն երկրները, որոնց արքան է համարում իրեն։ Թուկուլտի-Ուրտա I-ը իրեն «արքա Վերևի ու Ներքևի ծովերի» անվանելուց հետո նույն միտքը կրկնում է այլ ձևով. «արքա լեռների ու լայն դաշտերի (անապատի), և ապա այդ միտքն ավելի կոնկրետացնելով գրում է. «արքա Քարդունիաշի (Բաբելոնի), արքա Սումերի և Ակկադի»։ Բացի այդ «լեռների» և «Վերևի ծովի» տեղերն ավելի որոշակի դարձնելու միտումով գրում է. «Արքա Շուբարիի, Կուտիի և բոլոր Նաիրի երկրների»: Ինչպես տեսնում ենք այստեղ «Վերևի ծով» ասելով Սև ծով հասկանալը կլիներ անհեթեթություն։

«Վերևի ծովի» տեղադրությունը ճշտող կոնկրետ տվյալներ կան նաև Նաիրյան երկրների արքաների զինակցության դեմ Թիգլաթ-Պալասար I-ի (մոտ 1100 թ. մ. թ. ա.) կատարած հաղթական արշավանքի մասին թողած արձանագրության մեջ։ Այնտեղ մասնավորապես ասված է. «...Այդ ժամանակ հռչակված հզորությամբ Աշուրի... քայլեցի դժվար ճանապարհների վրայով և սրաթեք անցքերի միջով, որոնց ներսերը (սիրտը) նախկին օրերի ոչ մի արքա չգիտեր, դեպի երկրները ճեռավոր արքաների, որոնք Վերևի ծովի եզերքներում են և որոնք բնավ չգիտեն հպատակություն... անցա... տասնվեց հզոր լեռներ իմ մարտակառքով, որտեղ երկիրը լավ էր, և որտեղ այն դժվար էր՝ ես տաշեցի իմ ճանապարհը բրոնզե կացիններով։ Ուրումի ծառեր, ծառեր լեռների, ես կտրեցի, շինեցի ամուր կամուրջներ անցման համար իմ զորքերի և անցա Եփրատը... 23 արքաներ Նաիրի երկրի հավաքել էին իրենց մարտակառքերն ու բազմությունները իրենց երկրների և ճառաջացել էին պատերազմելու և դիմադրելու։ Մոլեգնությամբն իմ սոսկալի զենքերի հարձակվեցի նրանց վրա և բերեցի կործանում նրանց լայնասփյուռ զորքերին... 60 արքաներին Նաիրի երկրների, ինչպես և նրանց, որոնք եկել էին սրանց օգնության, հալածեցի ծայրով իմ նիզակի անգամ դեպի Վերևի ծով: ...Իմ ձեռքերը ձերբակալեցին բոլոր արքաներին Նաիրի երկրների, ես գթացի այդ արքաներին ու խնայեցի նրանց

8 Նույն տեղում, էջ 255։
9 Նույն տեղում, էջ 50։

կյանքը... ես նրանց ազատ թողեցի...։ Սիենին՝ արքան Դայաենի երկրի, որը չէր հանձնվել Աշուրին՝ իմ տիրոջը, ես բերեցի կապված ու գերի. ես գթացի նրան, ազատ արձակեցի...։ Իմ այս արշավանքի ընթացքում ես քայլեցի Միլիդիա քաղաքի վրա, որը Հանի Գալբատ երկրում է... Նրանք սարսափեցին իմ պատերազմական հզոր շարքերի մերձեցումից և փարվեցին իմ ոտքերին. ես գթացի նրանց և չգրավեցի այդ քաղաքը...»[10]։

«Վերևի ծովի» տեղադրության մասին սրանից ավելի որոշակի ու կոնկրետ վկայությունն ավելորդ է. Թիգլաթ-Պալասար I-ը Նաիրյան երկրների մասին պարզ դրում է. «...երկրները ճեռավոր արքաների, որոնք Վերևի ծովի եզերքներում են...»։ Ինչպես տեսնում ենք, Թիգլաթ-Պալասար I-ը պարզ ու որոշակի նշում է, թե Նաիրյան այս երկրները գտնվում են Վերևի ծովի եզերքներում։ Եթե «Վերևի ծով» ասելով հասկանանք Սև ծովը, ապա պետք է ընդունենք, որ Նաիրյան երկրները գտնվում էին Սև ծովի եզերքներում՝ հակասելով գիտական ճշմարտությանը։ Քաջ հայտնի է, որ Ուրարտուի արքաները իրենց կոչում էին արքա Նաիրի երկրի. մի՞թե Ուրարտուն գտնվում էր Սև ծովի ափին։ Եթե Նաիրյան այդ երկրները գտնված լինեին Սև ծովի ափին, ապա դրանց արքաները ինչո՞ւ պիտի անհանգստանային Թիգլաթ-Պալասար I-ի Եփրատն անցնելուց։ Այսպիսով, միանգամայն պարզ է, որ «Վերևի ծով» ասելով հասկացվել է Վանա լիճը, որի շուրջ գտնվում էին Նաիրյան երկրները և դրա համար էլ Սալմանասար III-ը Վանա լիճը կոչել է «Նաիրի երկրի ծով»։

Թիգլաթ-Պալասար I-ը Նաիրյան երկրներ է մտել անցնելով Եփրատը՝ արևմուտքից-արևելք։ Ասորեստանի արքաներն աշխատել են իրենց ելման կետից (Աշուրից) Եփրատին մոտենալ կարճ գծով՝ մոտավորապես ամորիտների մայրաքաղաք Մարիից (Սիրիա-Իրաք սահմանագծի Եփրատին հատող կետը) հարավ՝ կարճելով սիրիական անջրդի անապատով անցնող ճամփան։ Նրանք այս տեղերից մերթ արշավել են Դամասկոսի կամ Համայի երկրների վրա, մերթ էլ Եփրատ գետով բարձրանալով վեր՝ հարձակվել են Հաթի (Կարքեմիշի) երկրի դեմ։ Թիգլաթ-Պալասար I-ը Նաիրյան երկրների դեմ արշավանք սկսելիս արդեն գտնվում էր Եփրատի արևմուտքում։ Նա գրում է, որ այս արշավանքի ընթացքում անցել է Եփրատից արևմուտք գտնվող Միլիդիայի (Մալաթիայի) կողով, առանց այն գրավելու։ Նա նաև նշում է, որ Նաիրի մտնելու համար անցել է 16 լեռներ, որտեղից կտրել է ուրումի ծառեր՝ Եփրատի վրա կամուրջ շինելու համար։ Սա ցույց է տալիս, որ նա արևմուտքից Եփրատին մոտեցել է Հայկական Տավրոսի արևմտյան թևի (Միլիդիայից հարավ, Եփրատից արևմուտք գտնվող) լեռներն անցնելուց հետո։ Թիգլաթ-Պալասար I-ը Միլիդիայի մոտով անցել է Եփրատի վրայով Նաիրի մտնելուց առաջ և չի հիշատակում, թե Միլիդիային մոտեցել է Նաիրյան երկրներից վերադառնալիս, այլ նշում է, թե Միլիդիային մոտեցել է արշավանքի ընթացքում։ Իհարկե, նա Նաիրյան երկրներից գրաված մեծ ավարը և բազմաթիվ գերիները Աշուր տանելու համար չէր գնա Նաիրի երկրներից դեպի արևմուտք՝ դեպի Միլիդիա, մի քանի անգամ երկարացնելով ու դժվարացնելով իր վերադարձի ճամփան։ Պարզ է, որ նա Միլիդիային մոտեցել կամ նրա կողքով անցել է Նաիրյան երկրներ մտնելուց առաջ։ Հետևաբար, նա Եփրատը պետք է անցած լինի Միլիդիայի շրջանում՝ Արածանի-Եփրատ գետախառնուրդից հարավ։ Իհար-

10 Նույն տեղում, էջ 80—82։

կե սխալ կլիներ կարծել, թե Թիգլաթ-Պալասար I-ի Եփրատ կոչած գետը Արածանին է, քանի որ վերջինս սեպագիր արձանագրություններում կոչվել է Արզանի։

Այսպիսով, Թիգլաթ-Պալասար I-ը Եփրատն անցել է Միլիգիայի հյուսիսից։ Գյուլջուք լճի մոտով առաջանալով դեպի արևելք, Լիջե գյուղից վեր՝ Տիգրիսի Սուբնատ ճյուղի ակնաղբյուրների շրջանում, նա թողել է արձանագրություն։ Արևմուտքից՝ Եփրատի կողմից, Թշնամու գալուստի մասին տեղեկացած Վանա լճի եզերքներում գտնվող Նաիրյան երկրների արքաները միացյալ ուժերով դեպի արևմուտք՝ Արածանիին զուգահեռ գծով, ընդառաջ են եկել Թիգլաթ-Պալասար I-ին, բավականին հետ թողնելով Վանա լիճը։ Դրա համար էլ Թիգլաթ-Պալասար I-ը ասում է, թե նա 60 արքաներին հալածել է դեպի «Վերևի ծով», այսինքն՝ հալածել է մինչև նրանց ելման կետը և կենտրոնը հանդիսացող Վանա լիճը։ Այսպիսով, նա հասել է Մանազկերտի շրջան, բայց Արածանիից վեր չի անցել։

Ահա այս է ամբողջ իրողությունը, որով հերքվում է այն անհիմն կարծիքը, թե «Վերևի ծովը» Սև ծովն է։

Մեր այս փաստարկումներից սխալ եզրակացությունների հանգելը կանխելու համար ասենք, որ բնավ չենք մերժում Խուրրի-հայական երկրների՝ մինչև Սև ծով տարածված լինելու մեծ հավանականությունը։ Այդուհանդերձ, ակնհայտ է, որ Սև ծովը չի առնչվել ո՛չ սումերա-ակկադական և ասորեստանյան արքաների ճանաչած Նաիրյան երկրների և ո՛չ էլ «Վերևի ծով» տերմինի հետ։

## ЛОКАЛИЗАЦИЯ «ВЕРХНЕГО МОРЯ»

МАРТИРОС ГАВУКЧЯН

### Резюме

В клинописях шумеро-аккадских и ассирийских царей часто встречается термин «Верхнее море».

Некоторые ученые под названием «Верхнее море» подразумевают озеро Ван, другие—Черное море, а Л. Кинг считает, что это Средиземное море.

В надписях шумерского царя Лугала-Загиса, ассирийских царей Салманасара III и Тукульты-Урты I, и в особенности в надписях Тиглатпаласара I о походах в наирийские страны имеются прямые указания, не оставляющие сомнений в том, что термин «Верхнее море» обозначает озеро Ван.